

այդ կարելի կը լինի այն ժամանակ, երբ տղամարդիկ աւելի համակարգաբար կը վերաբերվին զէպի կանանց այդ տեսակ ձեռնարկութիւնները և կը քաջաբերեն նրանց իրանց առաջադրած նպատակին համեմատ համար, փոխանակ, ըստ սովորականին, հեղուկութեամբ նայելու կանանց այս և այն անկախ ձեռնարկութեան վրա...

Լ. Թ. Յ.

ՆԱՄԱԿ ՎԱՊԱՐԿԱՊԱՍՏԻՑ

Մայիսի 15-ին

Վաղարշապատը ոչ մի ժամանակ այնպիսի ներթափանց և բարոյական ներդրութեան մէջ չէ եղել, ինչպէս ներկայումս Մտ 700 տուն բնակ ժողովուրդ ունեցող Վաղարշապատի հասարակութեան ձեռքին այժմ կայ միայն 500 խաւովար վարկահող, մինչդեռ վաղը տիրում է դորանից երկու անգամ աւելի: 1866 թուի հողաբաժանութեան ժամանակ հասարակութեան հողն անցաւ ընտանիքներին ունեւոր դասի ձեռքը, այդ պատճառով էլ ստորին դասակարգի ժողովուրդը տանջուեալ է աղքատութիւնից, հող չունենալու պատճառով: Մի աղքատ սովորութիւն ևս կայ, որ նոյնպէս պակաս չէ ճնշում աղքատներին. ունեւոր հողատէրը, ինքն անընդունակ լինելով իր վարկահողերը մշակելու, ոչ միայն չէ տալիս իր դրացուն յայտնի պայմաններով ցանելու, այլ օտար գիւղացիներն են կարողանում օգուտ քաղել Վաղարշապատի սեփական հողերից և ջրից, որովհետև նոքա աւելի շուտով են համաձայնուել յարմարելու հողատիրոջ անարդար պահանջներին...

Ժողովուրդ մէջ մի վաղուց յետէ ծագած խռովութիւններն և տարածայնութիւններն վերջ տայու համար 1883 թուին հասարակութիւնը չինական ժողովով հողաբաժաններ ընտրեց. բայց նոքա ևս ենթարկվելով հանգամանքներ աղքատացումիս, սակաւին ոչ մի դործ չը կատարած հեռացած դրութեան մէջ են: Վերջապէս հասարակութիւնը ստիպված եղաւ ներկայ տարվայ սկզբում կրկին ժողով դուրսբերել, որով և ընտրեց նոր հողաբաժաններ—5 մարդ, որ նոքա հողերը բաժանեն միայն 1859 թուի աշխարհագրի ցուցակում մտած ընտանիքներ վրա: Մեր կարծիքով...

Ճշտութեամբ այն պիտի լինէր, որ ժողովուրդը վանքից այլ ևս ուրիշ վարկահող չը պահանջէ: Թէպէտ նախկին և այժմեան հողաբաժանները քանի-քանի անգամ բերանացի և զրաւոր կերպով դիմել են էջմիածնին, յայտնելով հասարակութեան ձեռքում եղած հողի սատակի պակասութեան մասին և խնդրել են անհատական հողերից մի յայտնի տարածութիւն տալ ժողովուրդին բաժանելու, բայց ս. Սինիսը միշտ այդ կարևոր խնդիրը մերժել է հասարակութեան, կարողացելով միայն եղած հողերը բաժանել ժողովուրդեան վրա: Որքան մեզ յայտնի է, վանքական կառավարութեան շահնորդութեան տակ եղած հողեր ոչ միայն օգուտ չեն տալիս ս. էջմիածնին, այլ աւելի քան 5,000 ռուբլի ծախսելով զանազանից, հետևանքը այն է լինում, որ քանի մի մասնաւոր անձինք կառավարվում են, և հազիւ թէ սերմն են տալիս վանքին. մինչդեռ եթէ ժողովուրդը ցանկեր նոյն հողերը, անհամեմատ աւելի մեծ արդիւնք ստացած կը լինէր և աղքատ հասարակութեան օգնած:

Այժմ Վաղարշապատում ցորենի խաւովարը ծախվում է 36—40 ռուբլով և դեռ այս ստրասփիլի թանգութեան ժամանակ նոյն իսկ ժողովուրդը խաւովարով ապագայի սնտոն յոյսով իր ձեռքի առանց այն էլ սակաւաչափ վարկահողերը պարագեցնում է բամբակ ցանելով, այն էլ օտար գիւղացիների հետ ընկերակցութեամբ: Եւ այսպիսով աստիճանաբար սպառվում է ցորենի բերքը մեղանում. ժամանակ է արդէն վերջ տալ հասարակութեան տարածայնութիւններին և հողերը բաժանել ժողովուրդեան վրա: Մինք յոյս ունենք, որ ներկայ հողաբաժանները ի նկատի ունենալով չլաւ է ուշ քան երբէք. նշանաբանը, շուտով կը ձեռնարկեն իրանց պաշտօնը կատարելու՝ շինական ժողովով հաստատված իրանց իրաւունքներին համաձայն:

Մի քանի խօսք էլ Վաղարշապատի դպրոցական գործի մասին: Չորս հազարի մօտ (արական և իգական) բնակիչ ունեցող Վաղարշապատը, որը ամենայն տարի միջին թիւով տալիս է ս. էջմիածնին աւելի քան 20,000 ռ. արդիւնք, Հայաստանի եկեղեցական կենտրոնում, ս. էջմիածնի դրան մօտ ոչ միայն չունի մի մեջնակարգ բարեկարգ դպրոց, այլ եղածն էլ համեմատաբար շատ

անբաւարար է: 600 տղայ և աղջիկ երեխաներից ուսումնարանների փոքրութեան և անյարմարութեան պատճառով ներկայումս ուսանում են միայն 180 աշակերտ և աշակերտուհի, իսկ ով որ միանգամ տեսել է երկուսը դպրոցների շինութիւնը իր խորտուկ դրութեամբ, չէ կարող յարգանքով խօսել Վաղարշապատի հասարակութեան մասին: Տղայք դպրոցը շինված է 1832 թուին հանդուցեալ Յովհաննէս Շամբրեանցի ձեռքով, իսկ օրիորդաց դպրոցը շինութիւնը կառուցվել է երջանկայիշատակ Գեորգ Գ. կաթողիկոսի օժանդակութեամբ 1872 թուին: Երկուսն էլ բոլորովին անհամապատասխան են այժմեան մանկավարժական և առողջապահական պայմաններին:

Մ. Ե.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒՆԻՒՄԻՑ

Մայիսի 10-ին

Վերին-Արցախի երկսեռ ուսումնարանների հոգաբարձութիւնը, վերջացած լինելով իր եռամսյակ գործունէութիւնը, հարկաւոր համարեց իր ընդհանուր գործերի մասին տեղեկութիւն տալ հասարակութեանը: Մայիսի 3-ին, օրիորդաց ուսումնարանի դասիճում, նշանակված էր ժողով օրին գլխաւորապէս մասնակցելու էին ուսումնարանների նախարարութեանը: Այդ նախարարութեան անձանց փոքրիկ է, որ կառավարվում են տեղիս երկսեռ ուսումնարանները՝ աղայոց և օրիորդաց, առաջինը չորս բաժանումներով, իսկ երկրորդը լրակատար հինգ բաժանումներով:

Սակայն բոլորովին անսպասելի կերպով այդ օրը խանդավառ ժողովը, որովհետև ճաշից յետոյ եկաւ սաստիկ անձրև ու լայնց հեղեղ խլացնող դեղձեր... Աղուցեցք, ինչպէս երևում է, չափազանց վախեցած են հեղեղից, որովհետև դեռ շատ լաւ յիշում են 1884 թ.ի աւերմունքները: Այս անգամ, բարեբաղդաբար, հեղեղը այնքան սարսափելի և վտանգաւոր չէր, թէ քանիդեց դեռ լրայի փոքրիկ կամուրջը և մասնաւոր, թեթիւ միջանցիկ առեւտրայիններն և ճանապարհներն: Ժողովուրդը շուտով հանդարտվեց և մտաւ հեղեղի սարսափը: Հաստատու օրս սրագոյսաս պրըս օղով հրաւիրվեց: Ժողովին ներկայ էին հոգաբարձութեան նախագահ Գրիգոր եպիսկոպոս Աշափիրեանց, երկու հոգաբարձուներ, շինական տանուտէրը, տեղիս հասարակաց բժիշկը, նուիրատու անդամները միայն մօտ 20 հոգի և համարեա բոլոր ուսուցիչները: Այդ ժողովը մասնաւոր հետաքրքիր էր և այն պատճառով, որ պ. Ս. Հայնազարեանց, անձնական գործերով Արցախից հեռանալու պատճառով, մտադրութիւն ունէր հրաժարվել հոգաբարձական պաշտօնից, որ նա, շարունակ 12 տարի, վարում է Արցախի երկսեռ ուսումնարաններում: Նախ քան հաշիւ ներկայացնելը՝ հոգաբարձու պ. Հայնազարեանց, որ մտադրել էր հրաժարվել հոգաբարձական պաշտօնից, Արցախից հեռանալու պատճառով, կարգաց կերպ և դպրոցի մասին զանազան զատուցութիւններ պարունակող մի ձևու, որի մէջ, ի միջի այլոց խօսելով իր անցեալ 12 տարվայ հոգաբարձական գործունէութեան մասին, յայտնեց, որ այդ գործունէութիւնը բազմաթիւ ներդրութիւններով լի է եղել:

Հոգաբարձուի ուսումնարանները բաւական ապահով են ներթափանց. մօտ 42 հազար ռուբլու դրամագումար կարող է առաջանալ, եթէ այս տարի, ինչպէս մտադրութիւն կայ, հոգաբարձութեանը անջողիլ հաւաքել բոլոր նուիրատուների խոստացած գումարները: Այդ գումարի անկասկած թողակազարմանից, ս. Թովմայի վանքից և միւս եկեղեցիներից ստացած տարեկան 800 ռուբլ և ուրիշ մասնաւոր աղբիւրներից ստացված փողերով միասին՝ տարեկան ստացվում է 5,000 ռուբլի, որով և կառավարվում են երկու ուսումնարանները: Նշանակում է, որ ազուցեցիները ամբողջութեամբ իրանց ուսումնարանների ապահովութեան վրա, մտածում են, որ իրանց զուակները դաստիարակութիւնը ներթափանց կարողանան մէջ գտնվել: Բայց միթէ զլուաւոր ինքնընդեր այստեղ փողն է, միթէ չը կայ մի այլ ինքնընդեր, որ կարողան է գործի էութիւնը, որով միայն պաշտպանվում և զարգանում է ուսման և դաստիարակութեան գործը հասարակութեան մէջ:

Մեր հասարակութիւնը կարծում է, որ միայն

փող տալով ամեն բան վերջացած է, որ եթէ ունի ուսումնարաններ և իր դուակներն ամենայն օր գնում են այնտեղ և զալիւ—ուրեմն ծնողները վերջացրել են իրանց պարտականութիւնը: Այն ինչ ուսումնարանը ոչ թէ մասնաւոր՝ այլ ընդհանուր հասարակական հիմնարկութիւն է, և ուսումնարանական գործը կարող է ճշմարիտ հասարակական բնաւորութիւն ստանալ այն ժամանակ, երբ ամբողջ հասարակութիւնը կապված միացած է իր ուսումնարանի գործի հետ: Հասարակութեան ունեցած դիտակցական սէրը և համակրութիւնը զէպի ուսումնարանները՝ առաջին և զլուաւոր պայմանն է, որով դաստիարակութեան գործը կենդանութիւն և շունչ է ստանում, որով ուսումնարանը դառնում է արժանի իր իսկական բարձր կոչմանը: Ուսումնարանի ներքին, մտաւոր-բարոյական առաջադիմութիւնը—անա այն մեծ և իսկական խնդիրը, որի վրա մեծ ուղարկութիւն դարձնելու է հասարակութիւնը, մի խնդիր, որ ամենատեղ կերպով միացած, կապված է ուսումնարանում գործող դաստիարակ-ուսուցիչների. անձնաւորութիւնների և ներանց արժանաւորութեան հետ:

Իսկ թէ ինչպէս է վերաբերվում Արցախի հասարակութիւնը զէպի ուսումնարանական նուրբ խնդրը՝ այդ մասին, ինչպէս ասվեց ինչպէս ժողովում, միջնորդական շատ բիշ բան կայ. մեր հասարակութիւնը սիրում է զանազան բարձրասաններ լսել այս կամ այն ուսուցչի մասին առանց մի լաւ ծանոթանալու նրա իսկական արժանաւորութեան հետ. ինչ կարծիք, որ այդ բոլոր խօսակցութիւնները և բարձրասանը կարող են միայն խաբել, մոտրեցնել հասարակութիւնը, որ հասարակութեան կարծիքի արդար և իրաւասի լինելու համար, անհրաժեշտ է, որ նա ինքը, բոլորովին անկախ որ է և աղքատութիւնից՝ մեռնէ ուսումնարան, տեսնէ, լսէ և ճանաչէ ուսման ընթացքը և ուսուցիչների կատարած գործը: Միայն հետաքրքրվելով, տեսնելով ամեն բան՝ կարող է հասարակութիւնը ճիշդ և անսխալ կերպով որոշել թէ որն է ուսումնարանի օգուտը և որն է վնասը, պատճառը... Յիշեալ ժողովում այդ հարցերի մասին լսելուց և հաշիւներին տեղեկանալուց յետոյ, ժողովականները յայտնեցին իրանց շնորհակալութիւնը պ. Հայնազարեանցին՝ նրա 12 տարվայ հոգաբարձական գործունէութեան համար: Աշափիրեան եպիսկոպոսը առաջարկեց օրհնութեան կոնդակ խնդրել Վ. կաթողիկոսի պարտի համար ժողովը, մի քանի մասնաւոր խնդիրների մասին վիճելուց յետոյ, ցրվեցաւ:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Մայիսի 16-ին

Վարաբաղի զանազան դիւղերում կան 16 մետր բարձր գործարաններ: Առաջին գործարանը Վարաբաղում հիմնվել է 70-ական թվականներին: Յետոյ սկսվեց կամաց-կամաց աւելանալ դրանց թիւը, և ինչպէս վերև ասեցինք, հասաւ 16-ին: Այդ գործարանների համար բոժօժը պատրաստում են բացառապէս գիւղացիները: Շեքամապահների մեծ մասը թուրքերն են: Այդ շերտապահները, լինելով բոլորովին տղէտ անձինք, բընակաբար բոժօժը պատրաստում են բոլորովին նահապետական ձևով, և այդ պատճառով տեղական սերմը կամաց-կամաց վատանում է: Գա, ի հարկէ, վնաս է թէ շերտապահներն և թէ մասնաւոր գործարանատէրերն. առաջինները վերահսկում են այն պատճառով, որ բոժօժը, ինչպէս ասեցինք, կամաց-կամաց վատանում է, իսկ վերջիններս—որովհետև, վատ բոժօժ գնելով, ստանում են վատ տեսակի մետաքս, որի պատճառով մետաքսի գինը ընկնում է: (Գլխաւորապէս մետաքսը ծախվում է Մոսկվա և Մարսել):

Չը նայելով, որ կան գործարանատէրեր, որոնք երկը են մի քանի տարի արտաստանում և լաւ գիտեն գործի հանգամանքը, այնու ամենայնիւ գրանք խաւայական կամ շինական սերմ չեն բերել տալիս և բաժանում շերտապահներին, որով կը լաւանար բոժօժի տեսակը, և այն ժամանակ կօգտվէին թէ իրանք և թէ շերտապահները: Սրա փոխանակ՝ ահա թէ ինչ են անում գործարանատէրերը: Միմեանց զէմ թշնամութիւններ, միմեանց զէմ խեղդիւղանք են գործ գնում: Որովհետև Պետրոսը կիրակոսի հետ թշնամի է, գնում է նրա գործարանի մօտ ինքն էլ մի գործարան շինում, սկսում է նրա բանտարները զէպի

իր գործարանը քաշել, օրավարձը աւելացնել, մի խօսքով ա սիական ձևով մրցել նրա հետ, որով երկուսի մէջ երկպառակութիւն է ծագում: Եւ այդ բոլորը, ի հարկէ, նրա համար, որ վնաս է իր թշնամուն: Պատահել է, որ ոմանք այս հանգամանքներում մրցման գործը հասցրել են ծ և ծ ի...:

Բոժօժ գնելու ժամանակ նոյնպէս տեղի են ունենում տղեղ բաներ: Երբ հասնում է բոժօժի ժամանակը, գործարանատէրերը, որոնք բոլորն էլ հայեր են, ընկնում են գիւղերը, և լաւ լինելով ըսկվում է... Փոխանակ միանալու և միասին բոժօժ գնելու, որով սովորական խառնակութիւնները չեն լինի և որով իր գնով կը գնեն բոժօժը, գրանք միմեանց ջգրու աւելացնում են բոժօժի գինը, շատ անգամ էլ նրա համար, որ թանգ գնով շատ գնեն ուրիշներից, աշխատում են աւելնել մի մի շրջող միմեանցից շատ բոժօժ կը սկսում միասին բոժօժը գնել, բայց շուտ է գալիս հէնց միացածներից մէկը՝ եւրօպացու գտակով, բայց զարաբաղցու գլխով՝ օտանակով և անում միութիւնը և սկսում թանգացնել բոժօժի գինը... Շերտապահներն էլ, տեսնելով դրանց անմիաբանութիւնը, սկսում են աւելի թանգացնել գինը և, ինչպէս ասում են, «տղը վեցի մաղումը զնեւ»: Ահա թէ ինչու համար Վարաբաղի մետաքսը կորցնում է իր նշանակութիւնը, և գործարանատէրերը ահապիս վնասներ են անում: Կան այնպիսիները, որ տասնեակ հազարներով պարտ են ուրիշներին:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը ուղարկել է Վարաբաղի գործարանատէրերին առաջիկայ սեպտեմբերին Քիֆլիսում բացվելի վիւղատնտեսական ցուցահանդիսի ծրագրեր ու կանոնները, առաջարկելով նրանց մասնակից ցուցահանդիսին: Այսի առաջ ունենալով տեղական սերմի վատանալու, փչանալու, ցանկանալի կը լինէր, որ գործարանատէրերը անպատճառ մասնակցէին ցուցահանդիսին, որով, մեր կարծիքով, Գիւղատնտեսական ընկերութեան ուղարկութիւնը կը զարձեն սկսվի փչանալու հանգամանք վրա: Թող ուրեմն գործարանատէրերը չը հրաժարվեն ցուցահանդիսին մասնակցելուց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մայիսի 24-ին

«Մշակ» լրագրի № 30-ի մէջ հանդուցեալ Պետրոս Շանիկեանի զագաղի վրա զարաբաղցիները կրած պակաս արժանաւորութեան վերաբերմամբ, որ էր այսպէս՝ «Երախտապարտ դարաբաղցիներից՝ աղբի անխոնջ մշակ Պետրոս Շանիկեանին», իւր յայտնի իրողութիւն բարեհաճել է իր նկատել, թէ «Շանիկեան կենդանութեան ժամանակ կատարել հալածանք կրեց Վարաբաղի կենտրոնում՝ Շուշում, որտեղից այժմ պակաս են գնում նրա վերեղմանի վրա»: Չքր պատուական լրագրի կարողացողները կարծիքը այդ մասին փարատելու համար, և ցանկանալով տպացուցանել, որ հանդուցեալի զագաղի վրա գրված պակաս արժանաւորութիւնն իսկապէս արտասպառութիւն էր զարաբաղցիների զգացմունքների զէպի Շանիկեան, սրա հետ միասին պատիւ ունեն ուղարկել ձեզ Շուշու հողերը դպրոցի հոգաբարձութեան կողմից՝ 1863 թվականի մայիս ամսում ի դիմաց Շուշու ամբողջ հասարակութեան երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսին ուղարկած խնդրեցի պատճենը, որը և խնդրում եմ խոնարհաբար «Մշակ» մէջ հրատարակել: Թող ինձ ներվի տակ և այս, որ զարաբաղցիք արժանաւոր մշակին միշտ յարգել գրեան և այդ իսկ է զարաբաղցիների յատկութիւնը:

Համբարձու Հայնազարեանց

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԻՆ

Պարսկաստանի ՍԱԼՄԱՍՏ դուաւուրը մեզ գրում են. «Վալմաստի Վալասար գիւղը վաղուց ունեցել է դպրոց թէ և հին ձևի, իսկ այս տարի այդ դպրոցը աւելի լաւ դրութեան մէջ է հոգաբարձութեան շնորհով, որը հրախրեց Թավրիզի մի ուսուցիչ. դպրոցի մէջ աւանդվում է բացի հայոց և պարսից լեզուներից, նաև ռուսաց լեզուն: Նոյն դպրոցի ուսուցիչները, հոգաբարձութեան և Վալասարի երկուստարները աշխատութեամբ շինվեց մի բեմ, և այդ ժամանակաւոր բեմի վրա առաջին անգամ ներկայացրին «Արշակ Բ.» և

«Երկու թուղթ», իսկ երկրորդ անգամ «Շուշանի» և «Կարմիր-կարմիր» երկու անգամին էլ զանգված լի էր հանդիսականներով: Առաջին անգամ եղած արդիւնքը գործածեցին հաղուտի և բեմական այլ պիտոյքները համար, իսկ երկրորդ անգամի արդիւնքով և Ղալասարի ժողովրդի յօթարակամ առատ նուէրներով սկսեցին թատրոնական դահլիճը շինել, որպէս զի մշտական բեմ ունենան: Թատրոնական դահլիճը շինելուց յետոյ հողաբարձութիւնը մտադիր է նաև մի ընթերցարան ունենալ: Ուրախակի կը լինէր, եթէ Սալմաստի միւս բաղամարդ հայ գիւղերն էլ օրինակ վերահանէին Ղալասարից: Չէ կարելի չորախանալ և այն բանի համար, որ Փայաջուկ գիւղն էլ Ղալասարում եղած ներկայացումից յետոյ պատրաստուում է ամսին 18-ին մի ներկայացումն տալու:»

Մեղ գրում են ՇՈՒՇՈՒՅՑ հետևեալը. «Արդէն ձեռք յայտնի է, որ այս կողմերում մեծ քանակութեամբ մորեխ էր երևացել: Կառավարութեան ցանցով մորեխի մի մասը արդէն փչացրած է, իսկ միւս մասն էլ թուղթի և ուրիշ տեղեր, այնպէս որ այստեղ այլ ևս երկիր չը կայ:»

Կ. Պօլսից պ. Կարապետ Էջնական ուղարկել է մեղ հետևեալ նամակը, խնդրելով տպագրել մեր լրագրի էջերում. «Մտաւորական պատուար ազգայիններէն Տիրան էջի. Էջիկէր հաճեցաւ ներկրի այս տարու Չատիկ տօնին առթիւ Պէօ-յիւրեղէի Ս. Հակոբիսէ կիկոնցոյն պատարագիչ բանաստեղծ ամբողջ պոեմը մը: Աւագ հինգ-շաբթի, պատարագիչ բանաստեղծ զգեստաւորեալ ծանոց սոյն բարեպաշտական նուէր ժողովրդեան, որ սիրաշօթար մասնակցեցաւ. բոլորսյն աղօթից որը կարգացուցանան յիշեալ բարեպաշտ անձին արևելատեղեան և ի հանդիս հողաց նորա համայն ննջելոց:»

ՇՈՒՇՈՒՅՑ մեղ գրում են. «Շրջակայ գիւղերից մէկում մի գիւղացի իր կնոջը յաճախ ծնծում է եղել, պատճառ բերելով կնոջ որդեմտութիւնից զուրկ լինելը: Անցեալները, երբ վերոյիշեալ գիւղացին ծնծում է իր կնոջը, կնոջ, այլ ևս չը կարողանայով համբերել, և տեսնելով որ ոչ ոք չէ կրամնում օջնկ իրան, փրակում է թողը թրաբամաների: մտ—որոնք զալիս են մեր կողմերում ամառը արածացնելու իրանց հօտերը—և յայտնում, թէ ինքը կրամնում է թուրքանալ... Հետեանք իր ժամանակին:»

Մեղ գրում են ՇՈՒՇՈՒՅՑ, մայիսի 25-ից, հետևեալը. «Շուշու Եւլախ կայարանը ջրով ծածկվելու պատճառով այստեղ 7 օր փօստ չը ստացվեց: Վերջապէս երէկ փօստը ստացվեց: Այն երեք շաբթի է, ինչ որ այստեղ համարեա թէ ամեն օր յորդ անձրև է տեղում: Ամսին 22-ին էլ, կէսօրից յետոյ ժամի 5-ին, 15 րոպէ սարսափելի կերպով համարեա թէ ընկ ուղի մեծութեամբ կարկուտ տեղաց: Կարկուտը քաղաքի ծառերի պտուղները փչացրել է:»

Տպագրելով «Մշակի» ներկայ համարում պահանջարկում Հատուկանի նամակը հանդուգները Շանչեանի վերաբերութեամբ, ցուում ենք: որ անկախորդ ենք հրատարակել Շուշու հողաբ զրպրոցի հողաբարձութեան կողմից Մատթէնու կաթողիկոսին ուղարկած խնդրելի պատճէնը՝ դրա մեծութեան պատճառով: Տարաբաղաբար այդ խնդրը չէ հերքում Շանչեանին հաղածելու տը-խուր փաստը, այլ միայն վկայում է այն, որ զրպրոցի հողաբարձութիւնը ղեմ է եղել այն ստորաբաժանը շինելու,—ինչպէս խնդրելի մէջն է ասված,—որոնք կատարել կրպով հաղածում էին հանդուգեալ գործիչին:»

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈՒՅՑ մեղ գրում են. «Թիֆլիսի գիւղատնտեսական ցուցահանդիսին մասնակցելու գործի համար մի մասնակուր ընտրվեց նաև Ալեքսանդրօպօլում, որը պէտք է աշխատէր Շի-րակի արդիւնքներով: զինքն և հանդէս հանելու առարկաները որչափ: Յայտնի չէ թէ այդ մասնակուրը ինչ կարեւոր նիւթեր է պատրաստել կամ ինչ միջոցներով է աշխատում ժողովրդին ղէպի ցուցահանդէս գրաւել, քանի որ Ալեքսանդրօպօլում ոչինչ յայտնի չէ այդ մասնակուրի գործունէութեան մասին:»

Մայրաքաղաքի լրագրներում կարդում ենք,

որ Բագուրի նախարարները մեջ հարց է յարուցում մի ընկերութիւն հիմնել նախ արտահանելու համար Չինաստանի, Կապոնիայի և Սիբիրի նաւահանդիսներով: Այդ արդիւնքները մեծ չափերով վաճառահանելու համար Արեւելքում, նախ յայնտեաներ և մարզայիններ կը բացվեն Ալաղիթիտոսում և Պետրօպօլիտոսում: Այդ կենտրոնական պահեստներից կէրօնիւր և լամպաները կուղարկվեն արեւելեան Սիբիրի և Չինաստանի քաղաքներում վերոյիշեալ ընկերութեան ձեռքով բացած բաժինները:

Ներքին գործերի մինիստրը տեղեկացնում է ընդհանրութեամբ, թէ թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ, ցամաքով Փիւրբիա ճանապարհ ընկնողները պէտք է թիւրքաց սահմանի վրա ներկայացնեն իրանց ազգային անցագրերները, որոնք պէտք է վաւերացված լինեն Օսմանեան կայսրութեան հիւպատոսարաններում:

Տեղական առաւելութեան հարցում են, որ մի ակցիոնրական ընկերութիւն է հիմնվել Տիւրքի քարածուխի հանքերը մշակելու համար: Այդ գործին ղեկն են կանգնած՝ Ալէքով, Մէլիք-Աղաբեանց և Կոստանեանց: Նոր կառավարելով ընկերութեան հիմնադրները այս օրերս կը գիւմն ֆինանսները մինիստրութեանը կանոնադրութիւնը հաստատել տալու համար:

Երևանից «Нор. Обозрение» լրագրին գրում են հետևեալը. «Մեր քաղաքում խոսակցութեան առարկայ է դարձել քաղաքագլխի ընտրութիւնը: Ամբողջ տեղական հասարակութիւնը երկու կուսակցութեան է բաժանված, որոնցից մէկը, բաղկացած լինելով շատ կասկածելի անձնաւորութիւններից, որոնք միշտ մի յարմար ղէպը են պտուտում պղտոր ջրում ձուկ որսալու, աշխատում է ընտրել այժմեան քաղաքագլուխ Վեդուսովին, իսկ բոլոր մնացածները միասին գործում են այդ տխուր հուշակ ստացած «գործողի» ղէմ: Սակայն ամենքի համար համարեա պարզ է, որ յաղթութիւնը Վեդուսովին կը մնայ, չորսով նըրա հակառակորդների անմարտութեան: Ընդդիմադրական կուսակցութեան ղեկն կանգնած ինտելիգենցիան էր միայն, որ ազնուաբար և բարեխիղճ կերպով է գործում և այդ պատճառով էլ երկի ստիպված է լսանարձիկ հասարակութեան աւել կամ պակաս պաղտութիւն ունեցող անձինքների սպառնալիքների առաջ:»

Ամբողջ մայիս ամսվայ ընթացքում մենք օր չենք յիշում, որ Թիֆլիսում անձրև չը գար. միայն ինն օր է պակաս, որ ջրհեղեղի ճակատագրական թիւը լրանայ: Նոյնանման երևոյթ նկատուում է և կողմասեան գրաւահան քաղաքներից մի քանիսում: Օրինակ, Ալեքսանդրօպօլից, տեղական առաւելութեան մէկում հարցուում են հետևեալը. «Մեղ մօտ անընդհատ անձրևներ են գալիս: Ամեն օր երկիրը ծածկվում է ամպերով և ապա կամ կարկուտ է գալիս, կամ անձրև: Քաղաքը բաժանուղ ձորերով հոսող փոքրիկ վտակները սպառնալի, ևս գետեր են դարձել, որոնք անկարագրելի կատաղութեամբ ընթանում են քարերը շուռ տալով, ալիւեր քանդակով և մեծ ծառերը արմատները տեղահան անկող: Այդ հեղեղները մեծ վնաս հասցրին քաղաքի ընակիչներին: Քաղաքի տների հողածածկ կտորները անձրևներից չէին կարողանում պաշտպանել բնակիչներին: Անձրևը թափվում էր առատաշնորհ և շատերը ստիպված էին լինում մահաճակատների ստի պառպել անձրևից ազատվելու համար: Նոյնպիսի անձրևային եղանակ է և ուրիշ տեղերում, որի չորսով և հարցորակցութեան ճանապարհները շատ տեղ, ինչպէս երևում է մեղ հասած տեղեկութիւններից, միանգամայն անանցանելի են դարձել:»

Հին-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՅՑ մեղ գրում են հետևեալը. «Մայիսի 20-ին, ժամը երկուսին, տեղս ժամանեց կովկասի զլխաւոր կառավարչապետ իշխան Գոնգուլօվ-Կօրսակով: Նոյն օրը, երկուցուսու ժամը 5-ին, նորին պայծառապալարութիւնը, Երևանի նահանգապետ Շախլօվի և ուրիշների հետ այցելից ուսուցեց եկեղեցին և քաղաքային ուսումնարանը, որի աստիճան իշխանը 20 ր. նուրբուրց յետոյ մտաւ հայոց եկեղեցին: Եկեղեցու դռները ընդունեցին իշխանին ծխական ուսումնարանի երկու կարգ շարված սաներն ու սանուհիները և քահանաների ղեկստաւորված դասը: Հայոց կիկ-

ղեցուց իշխանը գնաց մուսուլմանների աղօթատեղին, որտեղ արուսուղ-Սալաւը երկար ճան խօսեց մի շարք բարեմաղթութիւններով: 21-ին առաւօտեան իշխանը ուղևորվեց ղէպի Բիշանակ, որը տեղային ինտելիգենցիայի ամբարնոցն է կազմում, ինչպէս առում են, այն կողմերը նայելու նոր մարտկոցներ կառուցանելու համար: Երկուցուսու ժամը 6-ին իշխանը վերադարձաւ քաղաք: Օրոք քաղաքով զլխաւոր կառավարչապետի ներկայութիւնից, շրջակայ քաղաքի գիւղերի բնակիչները շտապեցին աղերսագրերով ղիւմն իշխանին, որը ողորմածաբար ընդունում էր բոլորի խնդրները:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԵՏԱՔԻՐՔԱՅԱՆ ԴԱՏ

Բերլինում այս օրերս քննվեց և վերջացաւ մի ուշադրութեան արժանի գործ, որը մօտիկ կապ ունի այն բանի հետ, թէ ինչ իրաւունքներ և ինչ կշիռ ունի մամուլը նոյն իսկ Բիսմարկի գաւազանով կառավարող Վերմանիայում:

Վնիպում էր «Volkszeitung» լրագրի խմբագրի գործը, որը մեղադրվում էր կայսրին վրաւորելու համար մի յօդուածով, որը կրում էր «Մարտի 18» վերնագրեր: Երբ լոյս տեսաւ այդ յօդուածը, ներքին գործերի մինիստրութիւնը զարգացրեց լրագրերը Դա մի արտասովոր ղէպը էր: Եւ այդ պատճառով մինիստրի վարմունքը ապօրինի համարվեց:

Ինչպէս նրա մէջն է, որ յիշեալ յօդուածը ոչինչ կապ չուի այժմեան կայսրի հետ. այդ յօդուածը հետաքրքրական նկատողութիւններ է պարունակում միմիայն Վիլհելմ I կայսրի, այսինքն այժմեան կայսրի պապի համար: Վերմանիայում օրէնքով ամենթիւնը վրաւորված կարող է համարվել այն ժամանակ միայն, երբ խօսքը վերաբերում է կենդանի կայսրին, իսկ երբ հարցը վերաբերում է մեռած կայսրին, այդ ղէպը ընտանաբար պաշտպան կարող է հանդիսանալ միայն այն ժամանակ, երբ հանգուցեալի մօտիկ բարեկամները այդ պահանջում են: Մեր յիշատակած ղէպը ոչ չէ պահանջել, որ յիշեալ լրագրի դատի ենթարկվի, ոչ Վիլհելմ առաջինի այրի ամուսինը, կայսրուհի Ալիսաբա, և ոչ էլ նրա աղջկի՝ Բագրին դուստրին, չեն պահանջել պատժել լրագրերը: Լրագրերը պատժի ենթարկելու խնդիրը յարուցել է միայն պրօկուրօրը, յայտնելով, որ ի ղէմ Վիլհելմ առաջինի, վրաւորված է այժմեան կայսրը՝ նրա թուր:

Այդ արտօրինակ պատճառարանութիւնը պրօկուրօրը պարզում է այսպէս. յիշեալ յօդուածի մէջ դատարարուում է ոչ թէ միայն Վիլհելմ I անձը, այլ և նրա քաղաքականութեան սխառմանը և որովհետև Վիլհելմ II յայտնել է, որ պիտի կառավարի երկիրը այդ սխառմով, ուստի այդտեղից պէտք է կարգադրել, որ այդ վրաւորանքը ուղղված է և այժմեան կայսրին: Եւ հիմնվելով այդ արտօրինակ լօղկկայի վրա, պրօկուրօրը պահանջում է պատժել յիշեալ լրագրի խմբագրին ընդամենը երեք տարի բանտարկութեամբ:

Այդ տեսակ պատճառարանութիւնը չէ արժանացել հէնց սկզբից հասարակական կարծիքին, և ամենքը սպասում էին, որ դատարանը կարգաբանի լրագրին և դրանով կապացուցանի, որ ներքին գործերի մինիստրի կարգադրութիւնը՝ լրագրի դատարանները՝ անհիմն և անարդար է եղել: Այդպէս էլ եղաւ. խմբագրի փաստաբանը հրաշալի մի ճառով ջրեց մեղադրանքը, և դատարանը փառաւոր կերպով արգարացրեց լրագրերը և նրա խմբագրին, թղթ չը տալով, որ մամուլի իրաւունքները խախտված լինեն սխալ քայաարութիւններից: «Volkszeitung» լրագրի խմբագրիը ներկայումս ահազին ժողովրդականութիւն է ստացել, ոչ թէ միայն այդ, այլ և մի ուրիշ գործի համար, որով նա մեղադրվում էր իշխան Բիսմարկին վրաւորելու մէջ: Այդ գործը քննվում էր հէնց մի և նոյն օրը դատարանում, ինչ օր և քննվեց առաջին գործը: Յիշեալ լրագրում հրատարակված էր մի յօդուած՝ «Ռեֆ» վերնագրով, որը աշխատում էր աղապարտելու, որ Եւրօպան և Վերմանիան տարա չունչ կարող են քաջել միայն այն ժամանակ, երբ իշխան Բիսմարկ կը մեռնի: Այդ յօդուածը համար պրօկուրօրը պահանջում էր խմբագրին երեք տարեկան բանտարկութեան ենթարկել: Սակայն դատարանը թէև չը

կարողացաւ միանգամայն ներել անվեներ պրօկուրիցիստին, այդ ինքն ըստ ինքեան ճիշդ կարծիքի համար, բայց բաւական թիւիւն պատիժ որոշեց, ենթարկելով լրագրի խմբագրին 150 մարկ տուգանքի: Անկասկած դատարանի արգարադատութեան գաղափարը երբէք չի պակասեցնի այն մարդկանց եռանդը, որոնք իրանց մտքերը հրապարակ դուրս բերելու միջոցին դիտեն էլ, որ համարեա կարող են ենթարկվել:

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՍԻԱՅԻՑ

Մծնպելիէ, 15 մայիսի

Հէնց որ ամառը մտնում է, երկտասարդների մի հոսանք է առաջանում ղէպի արտասահման Արտասահման եկող երկտասարդները իրանց ճանապարհորդութեան համար ընտրում են ամենավայ սկիզբը և կամ գարնան վերջը: Գրա պատճառը ոչ միայն այն է, որ ուսումնական տարին էլ այդ ժամանակ է վերջանում, որի անմիջական հետեանքն է դանադան ուսումնարաններից աւարտողների մի խումբ, այլ և այն հանգամանքը, որ արտասահմանում երկտասարդը միջոց ունենայ մինչև ուսումնական տարվայ սկսվելը ծանօթանալ այն երկրի լեզուի հետ, որտեղ նա մտադիր է ապրել:

Արդէն երկարամայ փորձը ցոյց է տուել, որ արտասահման եկողների մեծ մասը, եթէ չամենք ամբողջութիւնը, նախ քան հայրենիքից դուրս գալը հող չէ տանում ուսումնասիրել այն լեզուն, որը իրան հարկաւոր է: Գրանց 90 տոկոսը մինչև անգամ օտար լեզուով կարգաւ չէ իմանում և կամ հազիւ հազ տառերն է դանադանում և ահա թէ ինչ է լինում դրա հետեանքը: Արտասահման եկողը կամ արդէն ծանօթ ուսանող ունենում այն քաղաքում, որտեղ և ինքն է մտադիր ապրելու և կամ իր ծանօթների միջոցով նամակ է ստանում այնտեղ ապրող ուսանողների վրա: Եկող ուսանողը չուտով ծանօթանում է քաղաքի բոլոր առաստառների ուսանողների հետ: Նորեկը ծանօթ չը լինելով լեզուի հետ, միշտ ստիպված է լինում յարատև յարաբերութիւնների մէջ լինել իր հայրենակիցների հետ, միշտ նրանց շրջանում լինել և իր ամբողջ գիտ ժամանակը նրանց հետ անցկացնել: Անհրաժեշտ է այստեղ յիշել, որ ընդհանրապէս ուսաստանից ուսանողները, որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեն՝ Գերմանիայում թէ Ֆրանսիայում, երբէք մօտ յարաբերութիւնների մէջ չեն տեղական օտարազգի ուսանողների հետ, նրանք միշտ կղղկացած են ապրում բառիս բուն նշանակութեամբ: Սակայն այդ հարցը առժամանակ մի կողմ թողնենք: Նորեկը այդ հանդամանքներում միշտ մի և նոյն շրջանումն է լինում. նա բացի իր հայրենակիցներից ուրիշ ոչ ոքի հետ չէ խօսում: Գործածական լեզուն ընդհանրապէս ուսուցանելու է. եթէ հայեր են կամ վրացիք՝ հայերէն կամ վրացիքն են խօսում և կամ անխտիր ուսուցանել և իրանց մայրենի լեզուով: Երևակայեցէք, որ նորեկ ուսանողը նրանցիցն է, որոնք տեղական լեզուով հազիւ կարգաւ են կարողանում: Նա անմիջական յարաբերութիւն չունենալով տեղական օտարազգի ուսանողական շրջանների հետ, լեզուի կողմից մի օգուտ չէ կարողանում քաղել այն 3—4 ամուտ, որի վրա են դրել իր յոյժը: Այն ուսումնական տարին գալիս է և ուսանողը չուարած է մնում. երբ նա իրան հայել է տալիս թէ որքան առաջադիմութիւն է արել լեզուի մէջ, տեսնում է որ ոչինչ. արդ, ինչպէս պէտք է այդ լեզուագիտութեամբ մարդ պրօֆեսորներին լսել և քննութիւն տալ: Չափազանցած չենք լինի, եթէ ասենք որ այդ ուսանողները լեզուից ենք այնքան են հասկանում, որքան գիւղացի 6—7 տարեկան երկսան Նարեկացուն է հասկանում: Անցնում են մի քանի տարիներ և ենթագրենք, որ մի ձեով աւարտում են և հայրենիք են վերադառնում: Բայց ինչ էք կարծում, նրանք Ֆրանսիայի կամ գերմանիայի կարգին չեն իմանում:

Երբեմն պատահում է, որ արտասահմանեան ուսանողներից ոմանք կատարել կիրպով տիրապետում են տեղական լեզուին: Նրանց թիւը շատ և շատ նոյնն է և դրանք այն անձնաւորութիւններն են, որոնք արդէն Ռուսաստանում եղած ժամանակ էլ ազատ խօսում և գրում էին օտար լեզուով և 6—7 տարի են կացել արտասահմանում: Բայց կան և մի օրոշ թիւով ուսանողներ, որոնք թէև շատ հեռու են առաջնիքներից,

շատ էլ մօտ չեն վերջիններին Նրանք ազատ կարգում, հասկանում են և իրանց միտքը նոյն պես ազատ կերպով արտայայտում Գրանք այն ուսանողներն են, որոնք նախ քան արտասանման գալը բառական ուսումնասիրած են լինում լեզուն: Այդ թվին պատկանող ուսանողներին ևս վիճակված է լինում ուսական շրջանում լինել, բայց նրանք 3—4 ամսում կարողանում են այն քան առաջ գնալ լեզուի ուսումնասիրության մեջ, որ հենց առաջին օրերից ազատ կերպով հասկանում են պրոֆեսորներին և գրի են առնում նրանց դասախոսությունները:

Այժմ մեզ կանեն, որ եթե ֆրանսիական շրջանները մտնելով առելի հեշտությամբ կարելի է արհապագան լեզուի, ապա ուսանողները ինչու մտերիմ յարաբերություն մեջ չեն մտնում տեղական շրջաններին հետ, միթե արդեն կան Կենդ մտադիր ենք այդ հարցի մասին մի այլ անգամ լսուել ընդարձակօրին և առ այժմ բառականում ենք միայն ասելով, որ ուսանողները և մեղադր է և արդարացի:

Որքան համառօտներ մեր ասածը. արտասանմանն ուսանողներին տեղական լեզուաբանության տեսակետից կարելի է բաժանել երեք դասակարգի—1) Շատ լաւ իմացողներ, որոնք օտար լեզուով լսուում են այնպէս, ինչպէս իրանց մայրենի լեզուով: Գրանք այն ուսանողներն են, որոնք զեռ արտասանման չկամ ժամանակ էլ լաւ ծանօթ են եղել լեզուին: 2) Ազատ լսուողներ և հասկացողներ, որոնք այն ուսանողներն են, որ զեռ հայրենիքում բառական ծանօթ են եղել լեզուին տեսականապէս և 3) Այն ուսանողները, որոնք նախ քան արտասանման գալը ոչինչ չեն իմացել օտար լեզուի մասին և միանգամայն անծանօթ են եղել նրա հետ:

Մեր խօսքերից հետեւում է, որ այն բոլոր երկրասարդները, որոնք մտադիր են արտասանման գալ, պէտք է նախօրոք աշխատեն, զեռ Ռուսաստանում եղած ժամանակ բառականապէս ծանօթանալ այն լեզուի հետ, որով որ պիտի ուսումնասիրեն իրանց ընտրած մասնագիտութիւնը, ապա թէ ոչ, նրանք ոչ մի լաւ հետեւներ չեն հասնի:

Մուսիսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՆ

— Ինչպէս երևում է Պարիզից եկած հեռագրիներէր, Աստրիան բացարձակութիւններ է պահանջել Գերմանիայից խաղաղ-զերմանական դաշնակցութեան մասին: Այդ դաշնակցութեան վերաբերելու բերը այնքան յուզիչ ընտրութիւնն ունէին, որ ի հարկէ Աստրիան ստանաարտութեամբ նախ զրա վրա չէ կարող:

Միջազգային աշխարհագրական կօնգրեսը տեղի կունենայ օգոստոս ամսին Պարիզում: Այդ կօնգրեսին մերժել են մասնակցել Գերմանիայի աշխարհագրագետները: Յաւակ է ճշմարիտ, որ գերմանական գիտնական աշխարհը չէ կարողանում գիտութեան զբօսալը առելի բարձր պահել և ենթարկվում է քաղաքական զանազան մանրմանք հաշիւներին:

Բէլգրադից հեռագրում են, որ այն լուրերը, որոնք հաղորդում են իբրև թէ երկրի ներքը խառնակութիւններ կան, ճիշդ չեն և միանգամայն չափազանցած են:

Վիեննայում այն կարծիքի են, որ Միլան թագաւորի Բէլգրադ վերադառնալը անհրաժեշտ է երկրի քաղաքականութեանը մի փոքր հաստատ դիրք տալու համար: Թէ որքան կը սկի Միլանի Սերբիայում մնալը այդ յայտնի չէ: Ինքը Միլանը ևս վճռել է գալ Բէլգրադ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՈՒՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅՑ

ՊԵՏԵՐՈՒԳՐ, 29 մայիսի: Չերնօգորայի իշխանական ընտանիքը Մեծ Խչիան Պետր Նիկօլայիչի հարսնացուի, իշխանուհի Միլիցայի հետ, կը վերադառնայ Յետինէյից Պետերբուրգ փեռացուի անուանակալութեան օրը: Հարսնացուի հանդիսաւոր մտաքը կնիարկվում է, որ տեղի կունենայ յունիսի 26-ին:

ՊԱՐԻՉ, 29 մայիսի: Անգլուէմի մէջ երկէ ձեր-

բակալված բուլանժեան կուսակցութեան յայտնի գործիչները մինչև դիշերվայ ժամը մէկը դեռ չէին արձակված: Նրանք հրաժարվում են ցոյցերին աջակցելու պարտաւորութիւնից: Պարիզում զանվող բուլանժեան պատգամաւորները բողոք հրատարակեցին իրանց համախոհներին ձերբակալելու առիթով: Նրանք մեղադրում են կառավարական շաղի վրա է կանգնած և այդ բանի պատասխանատուութիւնը նրա վրա են դրում:

ՊԵՏԵՐՈՒԳՐ, 30 մայիսի: «Новое Время» լրագիրը լուր է հաղորդում, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ վերջնականապէս ընկած է այն նախագիծը, որը վերաբերում է վարչութիւններին կից փոխառու արկղեր հիմնելու հարցին:

ՊԱՐԻՉ, 30 մայիսի: Բարձրագոյն ատեանի ընկի: յանձնաժողովը գտել է, որ Բուլանժէի դէմ մեծ ապացոյցներ կան: Գրա վերաբերելու գործը չորեքշաբթի օր կը ներկայացվի զլսաւոր դատախազին:

ԼՕՆԻՕՆ, 30 մայիսի: Ուէլսի պրինցի որդին, պրինց Ալբերտ-Վիկտօր ձմեռը այցելելու է Հնդկաստան: Պրինցին կուղեկցի իր նախնիների փոքրիկ խումբ: Նա այցելելու է գլխաւոր քաղաքները և տեղական պետութիւնները, բայց ոչ ընծաներ է տալու և ոչ էլ ընդունելու է:

ՊԵՏԵՐՈՒԳՐ, 31 մայիսի: Այսօր Բերլինով ուղևորվեց դէպի Պարիզ եսպանական ներքին գործերի մինիստր կոմս Եօմազատօ, որը եկել էր Պետերբուրգ Ռուսաստանի պետական ներքին կազմակերպութեան հետ ծանօթանալու նպատակով: Այդ նպատակով կոմս Եօմազատօ նախք պաշտօնական տեղերը, քաղաքային դուման, հաշտարար դատարանների ժողովը, քաղաքապետի դիւանատունը, պոլիցիական մասերը և հրդեհաշէջներ խումբը:

ՊԱՐԻՉ, 31 մայիսի: Գերբուլդ, Լէզան և Լապէր այսօր կը ներկայանան ուղղիչ օտարկանութեան դատարանին Անդուլէմում, մեղադրվելով խաղաղարարութեան և պաշտօնական անձիւնների դէմ արած սպանաւիճքների համար: Անգլուէմում կատարած կաշառարարութիւնները դէմ մի քանի պատգամաւորներ թողարկին ներքին գործերի մինիստրն ասեց. «Այլ ևս չէ կարելի համբերել այդպիսի սպանաւիճքները: Մենք կը պատժենք և կընդհանրենք ամեն տեսակ ապստամբական փորձերին»:

ԲԷԼԳՐԱԿ, 31 մայիսի: Չը նայելով այն բանի վրա, որ հասարակութեան ուշադրութիւնը զբաղված է խոշոր անցքերով, թագաւոր կայսրի առաջարկած կենսալը ի պատիւ չէր հոգորիական իշխանի, վերին աստիճանի խորին ապաւորութիւնն գործեց: Մամուլը միանայ մէկնում է թագաւորական խօսքը որպէս սլափօնականութեան համար մի նշանաւոր անցք:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳՐԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 30-ին

Լճից օնի վրա 10 ֆունտ արծեւ	96 ր. 15 >
Բերլինի վրա 100 մարկ	47 > 5 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	38 > 20 >
Ոսկի արծեւ	7 > 70 >
Մաքաային կուպօններ	153 > 50 >
Արծաթ	1 > 13 >
Բորային դրոյններ	5 1/4 և 6 1/2 0/0 >
Պետակ. բանկ. 5 0/0 տոմս 1-ին շրջանի	98 > 62 >
— — — — — 2-րդ —	98 > 87 >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
— — — — — 4-րդ —	98 > 62 >
— — — — — 5-րդ —	98 > 62 >
— — — — — 6-րդ —	98 > 62 >
Նոր 4 0/0	84 > 75 >
Արևելեան 5 0/0 փոխառութիւն 1-ին շրջ.	98 > 75 >
— — — — — 2-րդ —	98 > 50 >
— — — — — 3-րդ —	98 > 50 >
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն	270 > 50 >
— — — — — երկրորդ —	244 > 50 >
5 1/2 0/0 բէնտա	102 > 75 >
Ռսկեայ բէնտա	174 > 50 >
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ.	139 > 25 >
Նոր երկաթուղային բէնտա	98 > 75 >
5 0/0 գրաւական թղթեր կալուած.	
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետ.	137 > 75 >
— — — — — թղթագ.	94 > 50 >
Գրաւ. թղ. Աշխ. բանկի	98 > — >
Գիւղական բանկի	102 > 50 >
6 0/0 գրաւ. թղ. թիֆլիսի—27 և 43 ա.	98 > — >
— — — — — փոխառութիւն—18 և 43 ա.	98 > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա-դաշնակար	95 > — >
Մօսկվայի քաղաք. օրվադաշնակար	94 > 25 >
Օդէսայի	95 > 75 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	84 > 50 >
Ս. Պետերբուրգի բորային արամարդութիւնը հանդարտ է:	

Ժամանակաւոր խնամարկ 3. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ
Հրատարակիչ ԳԻՒԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԻԳԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷՆԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 9/21 յունիսի ԲԱՌՈՒՄԻՅ զուրս կը գնայ շորհնաւ „LE NIEMEN“ (Նի-ՄԷՆ) նաւապետ RANGONE (ԲԱՆԳՕՆ), մանկով Կ. Պօլիս, Պօրտ-Նաֆօս և Լակալապ: Արէնտները ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆՉԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԷՈՐԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱՌՈՒՄԻ մէջ ԳՕԼԳՈՒՍԻՑ: 1—2

ԱԼԲԵՐՏԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

(ժողովարանին կից)

Ստացված են մեծ քանակութեամբ ֆՈՒՐՍԵՐ ԽԱՂՈՂԻ ԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, վերջին կատարելագործված սիտեմաների համեմատ, պուլվերիզատորով և առանց դրան: Գները շատ չափաւոր են, և մատչելի ամենքի համար: 3—8

ՄԱՆԿԱԲԱՐՉ օր. Ս. ԵՂԻՍԱՋԱՐԵԱՆ այս օրերս մեկնելով արտասահման 4 ամիս ժամանակով խնդրում է իր հիւանդներին, իր բացակայութեան ժամանակ, դի-մել մանկաբարձ օր. ԽՕՉԱԷՆԻԱՌԵԱՆՑԻՆ, որը բնակվում է Երևանեան հրապարակի վրա, տուն Կիւնիցիյարօյի (Эриванск. площадь, домъ Цинамзгва-рова). 4—4 (Կ. հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

(Կուկիա, վարձուցով արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՕՏՆԵՐԸ

ՆԱՌԱՍԱԳԻՆՆԸ—10—11 ժ. վիրաբուժական, (և ասամնացուի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի:

ՌՈՒԿԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երիտայց և կանանց ց.
ԿԻՆԻՇԿ ԽՍՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երիտայց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. սկանյի, կոկորդի, քիթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻՆՎ.—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երիտայց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎՈՆԵՐԸ

ԳՕԳՕՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երիտայց և ջղային ց. (էկեկորտերապիա):
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—6 1/2—7 1/2 ժամ.
Հիւանդանոցում է մաս կաւար ձուլիք ՄՕԳԵՐ և ԵՐԵՎԱՆԵԱՆ:
ՎՃԱՐ—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիուսի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերտեսուչ ՆԱՌԱՍԱԳԻՆՆԸ

Недавно приѣхалъ въ Тифлисъ

ДАНТИСТЪ ЗАЛЛАХЪ

А МЕРИКАНЕЦЪ

Докторъ зубной хирургіи Бальтиморскаго Зубоврачебнаго училища въ АМЕРИКѢ, членъ Французскаго Зубоврачебнаго общества въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.
Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, на СОЛОЛАКСКОЙ улицѣ, домъ протоіерея ОРБЕЛИ, № 16.

ՆՈՐԵՐՈՒՄՍ ՀԱՍԱԻ ԹԻՖԼԻՍ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա Ց Ի

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՎԱԼԼԱԿ

Գօկտօր ատամնաբուժութեան Ամերիկայի ԲԱՄՏԻՄՈՐ քաղաքի ատամնաբուժական զգրոցի, անդամ ֆԱՐԻՉԻ ատամնաբուժական ընկերութեան Գ. Վալլակ ունի ատամնաբուժի դիպլոմ Գորպայի համալսարանից:

Ընդունում է ատամների ցաւով հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, իր բնակարանում, Սօլօլակի փողոցում, աւագ քահանայ Օրբէլի տանը, № 16

5—10 (2)



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянь“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (b)